ի սպառ ձեռք վերցրին Բակտրիայից, որն արքայից-այքայի սեփականութիւն էր կազմում: Ինչի՞ պիտի Անակը Հայաստանի թագաւորին սպաննէր, որպէս զի կարողանար տիրել Բակտրիային: Ինչի՞ Արտաշիրը անմիջապէս չէր յանձնում այդ վիճելի կալուածքը Անակին, քանի որ դա իր անմիջական իշխանութեան տակն էր գտնւում: Անակը այնպիսի հրէշային գործ կատարելու համար յուսադրուած էր Պալխարի Բահլն ու Հայաստանի թագը ձեռք բերելու: Անակը շատ լաւ գիտէր, որ Սասանեան Արտաշիրի որ եւ է կալուածքին կամ Բակտրիայի Բալխին աչք անկելը կը վերջանար մի բաժակ օշարակով, որ նրան կը տանէր խաւարի անդունդը: Նա Բահլն ու Հայաստանի թագն էր ուզում կորզել Խոսրովից եւ արքայից-արքայի երկրորդ բազմոցը դրաւել Երանեան աշխարհում: Խորենացին Ագաթանգեղոսին հակասող վիճակից ազատելու համար գրում է իր Բ. գրքի կը. եւ կԹ. գլուխները, առանց քննելու այն պարագաները, որ քարերն ու ջրերը լեզու պիտի ելնեն եւ բացատրութիւններ տան Ի-րդ դարում:

Պալխար վտակն եւ Բահլ առ-ը Խալխալից միան 30 կիլոմետր հեռաւորութիւն ունին, որոնք մինչեւ օրս Հայ գրականութեան շատ քիչ են նիւթ տուել: Պալխար եւ Խալխալ վտակների աւազանները ինչպէս աշխատարեան, նոյնպէս նախապատմական եւ